ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/106

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ Ա/Ձ Սեպուհ Ներսիսյան Աշոտի (պետական գրանցման վկայականի համար՝ 290.1132757),

քննելով «Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ի կողմից 23.12.2020թ. ներկայացված և 23.12.2020թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/106 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ն (հետայսու՝ Մասնակից) 23.12.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ը 08.12.2020 թվականին հրապարակել է «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնանշման հարցման հայտարարություն և հրավեր՝ իր կարիքների համար պահնորդական ծառայության ձեռքբերման նպատակով:

Պատվիրատուի կողմից հրապարակված «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով հրավերում նշված չի եղել գնման ընթացակարգի հայտով որևէ լիցենզիա (թույլտվություն) ներկայացնելու պարտադիր կամ ոչ պարտադիր պայման: Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի հայտը «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի 15.12.2020թ. N 2 արձանագրության 3.2 կետով կայացված որոշմամբ մերժվել է՝ հայտով «Մասնավոր պահնորդական գործունեության իրականացման» լիցենզիա չներկայացնելու պատճառաբանությամբ:

«ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի 15.12.2020թ. N 2 արձանագրությունում Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի կողմից առաջարկված գնային առաջարկն արձանագրված չէ, թեև Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի կողմից ներկայացված գնային առաջարկը նվազագույնն է /3,849,000 ՀՀ դրամ/ և համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

«ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի 15.12.2020թ. N 2 արձանագրության 5.1 կետով կայացված որոշման համաձայն՝ հանձնաժողովը 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Ավանգարդ Սեքյուրիթի» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, որին առաջարկվում է կնքել պայմանագիր, սակայն 20.12.2020 թվականի դրությամբ պայմանագիր կնքելու մասին որոշումը տեղեկագրում հրապարակված չէ: Հրապարակված չէ նաև գրանցամատյանը:

Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները.

ա. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 59-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե մասնակիցը հայտով ներկայացրել է օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին

գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին.

2) բացի հայտարարությունից, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

բ. Պատվիրատուի կողմից 08.12.2020 թվականին հրապարակված «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.2 կետի համաձայն՝ Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ նույն հրավերի 2-րդ մասի 2.2 կետով նախատեսված գրավոր հայտարարություն: Բացի վերոնշյալ կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը գնահատում է նույն հրավերով սահմանված պայմաններով:

գ. Պատվիրատուի կողմից 08.12.2020 թվականին հրապարակված «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով սահմանված կարգով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են նույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.3 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

2.5 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք, (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի

ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

դ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

ե. Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի կողմից ներկայացված հայտն ամբողջապես համապատասխանում է «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով հրապարակված հրավերի պահանջներին և ենթակա չէ մերժման: Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի գնային առաջարկը ներառված չէ հանձնաժողովի նիստի արձանագրությունում»

Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանը հավաստիացնում է, որ պայմանագրով նախատեսվող բոլոր պարտավորությունները կիրականացնի պատշաճ և ՀՀ օրենսդրությանը՝ ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան: Պարտադիր լիցենզավորման ենթակա գործունեության ցանկացած տեսակ (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում) Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի կողմից կիրականացվի սահմանված կարգով և անհրաժեշտ պահանջներին համապատասխան»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Մասնակիցը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է անվավեր ճանաչել «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի 15.12.2020թ. N 2 արձանագրության 3.2 և 5.1 կետերով կայացված որոշումները, Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, սահմանված կարգով հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի հետ կնքել պահնորդական ծառայություններ մատուցելու պայմանագիր:

Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.12.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել բողոքը:

2. «Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 28.12.2020թ. գրությամբ բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ը 23 դեկտեմբերի 2020թ. ծանուցվել է «ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ»-ի կողմից իրենց ներկայացված բողոքի վերաբերյալ (բողոքի ծածկագիրը՝ /ԲՔԱ-ԳՆ/1/19390-2020, հետայսու՝ «Բողոք»), իսկ 28 դեկտեմբերի 2020թ. Բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստի վերաբերյալ: Բողոքի վերաբերյալ «Պատվիրատու»-ն հայտնում է հետևյալ դիրքորոշումը.

Պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ-12/05-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցել է նաև Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ն :

Մրցույթին մասնակցելու պահին /15.12.2020թ./ Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ն չի ունեցել «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված լիցենզիան, որի պատճառով հայտը մերժվել է: Ցանկանում ենք տեղեկացնել, որ «Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ը համարվում է Պետական կառույց/շենք/ և նրա պահնորդական և անվտանգության ապահովման ծառայությունը չի կարող կատարվել առանց համապատասխան որակավորում և լիցենզիա ստացած իրավաբանական անձանց կողմից:

Բողոքի 1.4 կետի հետ կապված հայտնում ենք, որ հայտերի բացման նիստի արձանագրության 5.1 և 5.2 կետերում հստակ նշված է «Առաջարկվում է /այլ ոչ թե որոշվում է/ կնքել պայմանագիր /5.1 կետ/ որակավորման /Որակավորման և պայմանագրի ապահովումները/ փաստաթղթերը ներկայացնելուց հետո /5.2 կետ/: Հրավերի 10-րդ կետի համաձայն՝ մասնակիցները որակավորման չափանիշներին բավարարող փաստաթղթերը պետք է ներկայացնեն նման պահանջ ստանալու օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում: Քանի որ 20.12.2020թ.-ի

դրությամբ դեռ ներկայացված չէին, այդ իսկ պատճառով «Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը» հրապարակված չէր տեղեկագրում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ առաջնորդվելով վերոգրյալով և ղեկավարվելով «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետով՝ խնդրում է ամբողջությամբ մերժել Բողոքը այն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.12.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/106 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/106 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 3.2-րդ կետով կայացված որոշմամբ Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ի հայտը մերժել է, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված հայտում բացակայում էր «Մասնավոր պահնորդական գործունեության իրականացման» լիցենզիան:

3. Նույն արձանագրության 5.1-րդ կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ավանգարդ Սեքյուրիթի» ՍՊԸ-ին ճանաչել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից, որի հետ առաջարկվում է կնքել պայմանագիր:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ի կողմից 23.12.2020թ. ներկայացված բողոքը, «Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի 28.12.2020թ. գրությունը, «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ***գնումը*** պատվիրատուի հատուցմամբ՝ ***ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի*** ապրանքների, աշխատանքների և ***ծառայությունների ձեռքբերումը***, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության, ներառյալ հավատարմագրային կառավարման և կոնցեսիայի գործարքների շրջանակներում մասնավոր հատվածի գործընկերոջը իրավունքների շնորհումը:

Նույն մասի 23-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:**

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ ***կարիքին համապատասխան*** ապրանքների, աշխատանքների և ***ծառայությունների ձեռքբերում՝*** համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:*** Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

Այսպիսով՝ «Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար ***պահնորդական ծառայությունների ձեռքբերման*** նպատակով հայտարարվել է «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 3.2-րդ կետով կայացված որոշմամբ Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ի հայտը մերժել է, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված հայտում բացակայում էր «Մասնավոր պահնորդական գործունեության իրականացման» լիցենզիան:

Նույն արձանագրության 5.1-րդ կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ավանգարդ Սեքյուրիթի» ՍՊԸ-ին ճանաչել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից, որի հետ առաջարկվում է կնքել պայմանագիր:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ն հավաստիացնում է, որ պայմանագրով նախատեսվող բոլոր պարտավորությունները կիրականացնի պատշաճ և ՀՀ օրենսդրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան: Պարտադիր լիցենզավորման ենթակա գործունեության ցանկացած տեսակ (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում) Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի կողմից կիրականացվի սահմանված կարգով և անհրաժեշտ պահանջներին համապատասխան:

Արդյունքում բողոքաբերը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին անվավեր ճանաչել «ՍԱՊՌԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի 15.12.2020թ. N 2 արձանագրության 3.2 և 5.1 կետերով կայացված որոշումները, Ա/Ձ

Սեպուհ Ներսիսյանի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, սահմանված կարգով հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ի հետ կնքել պահնորդական ծառայություններ մատուցելու պայմանագիր:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՍԱՊՈԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է իր կարիքների համար ***<u>պահնորդական ծառայությունների ձեռքբերման</u>*** նպատակով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և <u>իրավական այլ ակտերից:</u>*** Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ ***<u>նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝</u>*** հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ ***<u>տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:</u>***

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ սույն օրենքը սահմանում է մասնավոր պահնորդական գործունեության իրավական հիմքերը, սկզբունքները, խնդիրները, պետական և այլ մարմինների հետ համագործակցության կարգը, կարգավորում է այդ գործունեության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները:

Նույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվում է, որ

1. ***Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող թիկնապահական և պահնորդական գործունեության վրա:***

2. ***Հայաստանի Հանրապետության տարածքում թիկնապահական և պահնորդական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն միայն սույն օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձինք:***

Նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացնում են տվյալ գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձինք***՝ սույն օրենքով նախատեսված թիկնապահական և պահնորդական ծառայություններ մատուցելու միջոցով:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատերն ***այն ֆիզիկական անձն է***, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածները հստակ ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության տարածքում թիկնապահական և պահնորդական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն միայն սույն օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձինք:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ բողոքաբերը՝ Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ն, ով հայտ է ներկայացրել «ՍԱՊՈԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և բողոքով վիճարկում է իր հայտը մերժելու մասին որոշումը և արդյունքում խնդրում է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին պարտավորեցնել Պատվիրատուին Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ի հետ կնքել պահնորդական ծառայություններ մատուցելու պայմանագիր, հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, ով «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ իրավունք չունի իրականացնելու թիկնապահական և պահնորդական գործունեություն, հետևաբար նաև՝ լիցենզիա ստանալու իրավունք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 15.12.2020թ. N 2 արձանագրության 3.2 կետով Ա/Ձ Սեպուհ Ներսիսյան Աշոտի կողմից ներկայացված հայտի մերժման վերաբերյալ կայացրած որոշման համար չէր կարող հիմք հանդիսանալ հայտում «Մասնավոր պահնորդական գործունեության իրականացման» լիցենզիայի բացակայությունը, քանի որ Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվող հայտերում լիցենզիայի ներկայացման պահանջ Ընթացակարգի հրավերով սահմանված չէ, միևնույն ժամանակ Մասնակցի հայտը ենթակա է անբավարար գնահատման և մերժման այն հիմքով, որ անհատ ձեռնարկատերը, համաձայն «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի, չի կարող իրականացնել պահնորդական գործունեություն, հետևաբար չունի լիցենզիա ստանալու իրավունք, բնականաբար նաև ներառված չէ police.am ինտերնետային կայքում հրապարակված 08.09.2020թ. դրությամբ «Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների» ցուցակում, ուստի վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ, թեև Մասնակցի հայտի մերժման հիմքը ըստ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի N 2 արձանագրության սխալ է արձանագրված, այդուհանդերձ, հաշվի առնելով մասնավոր պահնորդական գործունեության ոլորտի իրավակարգավորումները, վերջինս հիմք չէ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի համար՝ Պատվիրատուին պարտավորեցնելու Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, սահմանված կարգով հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի հետ կնքել պահնորդական ծառայություններ մատուցելու պայմանագիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Սեպուհ Ներսիսյան Աշոտի Ա/Ձ-ի կողմից 23.12.2020թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1. Պարտավորեցնել «ՍԱՊՈԴԹ-ԳՀԾՁԲ12/05-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում 15.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 3.2-րդ կետով կայացված որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Բողոքի պահանջը՝ մնացած մասով, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**